

**ԱՆԿԻՆԱԳԱՐՉԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԵ՛ ԳԼԱՆԻԿԻ ՎԱՃԱՌՔԸ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿԵԼՈՒ ԳԾՈՎ**

ԺՐՆԵՒ, 21 (ԱՅՓ).- Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը երկվ միաձայնությամբ որոշեցրած է անկիւնադարձային համաձայնությունը՝ գլանիկի (սիկարեթ) վաճառքը սահմանափակելու գծով, ծխելու պատճառով տարեկան 5 միլիոն մահերը նուազեցնելու նպատակով:

Համաձայնությունը առաջին է, որ կառավարությունները յանձնառությունով կը դնէ հանրային առողջապահության մեծ հարցի մը լուծման համար: Կազմակերպության ընդհանուր տնօրէնը յայտարարած է, թէ այս համաձայնությունը «պատմական է հանրային ընդհանրական առողջապահության համար», դիտել տալով, որ անոր նպատակը միջառաջարկ մարդոց կեանքը փրկել է: Կ'առաջադրուի սահմանափակումներ պարտադրել ծխախոտի ծանուցումներուն եւ պայն հովանաւորելու միջոցներուն վրայ:

Համաձայնությունը գոյացած է երեք տարուան երկար եւ դժուարին բանակցություններէ ետք:

## ՉԱՌԱՎՅՈՒՄԻ ԿՈՉԸ ԻՍԼԱՄԱՆԵՐՈՒՆ

### ԱՐԵՒՍՏԵԱՆ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՐԳ ՄԵ ԵՐԿԻՐՆԵՐ ԿԸ ԴԻՍԱԳՐԱԿԵՆ ԱՇԱԲԵԿՉԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Մինչ Արեւմտեան աշխարհը եւ միջին արեւելեան կարգ մը երկիրներ կը դիմագրաւեն ահաբեկչական նոր յարձակումի մը սպառնալիքը, «Քալիտա» ցանցին մէջ Ուսամա Դըն Լաւէնի փոխանորդը՝ Այման Չաուահիրի, երկ կոչ ուղղած է իսլամներուն՝ արեւմտեան թիրախներու դէմ անձնասպանական նոր գործողություններու ձեռնարկելու:

Չայնագրուած ձայն մը, որ ըստ պատկերասփիւռի «Ժապիրա» կայանին՝ Չաուահիրի կը պատկանի, կոչ ուղղած է իսլամներուն, որ արեւմուտքիները «իսլամութեան հողերէն, այսինքն՝ Արաբական թերակղզիէն վտարեն, անոնց վրայ յարձակելով եւ հարուածելով «Ամերիկայի, Անգլիոյ, Աւստրալիոյ եւ Նորվեգիոյ դեսպանատուները եւ այլ կեդրոններ»:

Ան նաեւ կոչ ուղղած է իսլամներուն, որ Մ. Նահանգներու մէջ 11 Սեպտեմբեր 2001ին անձնասպանական գործողություններու ձեռնարկած 19 անձերէն դաս տրվին:

Չաուահիրի դիտել տուած է, որ «իսլամներն ու հրեաները միայն սպանութեան եւ արեւմտեան յեղուկ կը հասկնան»: Ան նաեւ քննադատած է արաբական երկիրները, որոնք օժանդակած են Իրաքի դէմ ամերիկեան զիջատորութեամբ պինդորակաւ արշաւին, նշելով Մէնտալան Արաբիան, Քուէյթը, Քաթարը, Պահարէյնը, Եմէնը եւ Յորդանանը:

«ԷՖ. Պի. ԱՅ.»-Ի ՏՆՕՐԵԼԸ ԱՉԱԼՐՁՈՒԹԵԱՆ ԿՈՉ ԿՈՒՂԴԸ

Մ. Նահանգներ, Քանադա, Բրիտանիա եւ

Գերմանիա երկ Ռիատի մէջ իրենց դեսպանատուները փակեցին:

Լոնտոն եւ Ուաշինգթոն յայտարարեցին, թէ գաղտնի նոր տեղեկություններու համաձայն, Մ. Արաբիոյ մէջ մօտայնու յարձակումներ տեղի պիտի ունենան:

«Է.Ֆ. Պի. Այ.»-ի տնօրէնը՝ Ռոպրթը Մէօլըր երկ ամերիկացիներուն աշարջութեան կոչ ուղղած է, հաւանական յարձակումներու դէմ, ըսելով, թէ գործակալութիւնը ստացած է տեղեկություններ, ըստ որոնց՝ Մ. Արաբիոյ եւ Մարոքի մէջ տեղի ունեցած պայթումները «պատրաստություն են» Մ. Նահանգներու մէջ յարձակումներու:

Օր մը առաջ ամերիկեան իշխանությունները ահաբեկչական յարձակումներու գծով ահապանգր երկրորդ բարձրագոյն մակարդակի բարձրացուցած էին:

Մ. Արաբիոյ գահաժառանգ իշխանը՝ Ապտալա Պըն Ապտալ Ալի, Երեքշաբթի գիշեր յայտարարած է, թէ երկրին վտանգ սպառնացողները պիտի ձերբակալուին եւ «ծանրօրէն պիտի պատժուին»:

Իսկ երկ ընդհանրապէս «Սիսա» թերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ, ան յայտնած է, որ Մ. Արաբիա շօշափելի փաստ չունի, թէ «Քալիտա» կը կանգնէր Ռիատի մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած անձնասպանական գործողություններուն ետին, որոնք 25 Կոհ խլած էին:

Բացի վերոնշեալ երկիրներէն, արեւմտեան միւս դեսպանատուները եւ հիւպատոսարաններ երկ քնականոն ձեռով շարունակած են

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### Հ. Յ. Դ. ԱԿԱՆՉԱԼՈՒՐ Է ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՉԱՅՆԻՆ

Կ'ԸՍԷ ԱՐՏԱՇԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ



Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններու նախընտրական քարոզարշաւի ծիրէն ներս, Հ. Յ. Դ. ներկայացուցիչներ երկ կ'անդիպում ունեցան Երեւանի Շենգաւիթ համայնքի բնակիչներուն հետ: Հանդիպման ընթացքին անոնք ընդգծեցին, որ երկրին համար անհրաժեշտ են բարեփոխումներ եւ այդ բարեփոխումները պէտք է սկսին Մայիս 25ին:

Հ. Յ. Դ. համամասնական ցանկին մաս կազմող, Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշէս Թումանեան իր ելույթին մէջ նկատել տուաւ, որ Հայաստանի նախագահական վերջին ընտրութիւններուն ընթացքին յստակօրէն դրսեւորուեցաւ հասարակութեան զգալի մասին դժգոհութիւնը՝ ընկերային առկայ իրավիճակին ի տես, հետեւաբար ժողովուրդը ակնկալիքներ ունի իշխանութիւններէն: Թումանեան ընդգծեց, որ Հ. Յ. Դ., որ որդեգրած է «Փոխեց մեր կեանքը» կարգախօսը, ակնաջալուր է ժողովուրդին ձայնին եւ կ'աշխատի բոլոր մարզերէն ներս բարեփոխում յառաջացնելու նպատակով: Յայտնելով, որ Հ. Յ. Դ. կ'առաջարկէ առանց իշխանափոխութեան կեանք փոխելու տարբերակ, Թումանեան նշեց, որ պատահական չէ նաեւ Հ. Յ. Դ. «Արդարութիւն եւ աշխատանք» կարգախօսը, որովհետեւ կուսակցութեան գաղափարախօսութիւնը հիմնուած է ընկերային արդարութեան հաստատման սկզբունքին վրայ: «Դաշնակցութիւնը կը պնդէ, որ երկրին համար անհրաժեշտ են այնպիսի փոփոխութիւններ, որոնք աշխատանք կը ստեղծեն, կը մեղմացնեն անգործութիւնը, կը լուծեն ընկերային խնդիրները: Այս պատճառով, կուսակցութիւնը ընտրութիւններուն կը մասնակցի իր ցանկին վրայ ներառելով նաեւ «Մաքուր անցեալ» ունեցող ոչ կուսակցականներ: Միաժամանակ, Հ. Յ. Դ. չի յայտարարեր, որ 4-5 տարուան ընթացքին կարելի է իտէլական կենսամակարդակ ստեղծել, այսուհանդերձ կ'ըսէ, թէ որեւէ մարզի մէջ բարեփոխումներու համար նախաւորապէս անհրաժեշտ են օրէնքներ», նշեց Արտաշէս Թումանեան:

Իր կարգին, Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ ընկ. Աղուան Վարդանեան իր խօսքին մէջ դիտել տուաւ, որ Հայաստանի մէջ պէտք է ստեղծել առաւելագոյն չափով ազատ եւ արդիւնաւէտ աշխատելու պայմաններ, իսկ տնտեսութեան բարգաւաճման արդիւնները պէտք է վերաբաշխուին արդար ձեւով:

Իր խօսքը ուղղելով երիտասարդներուն, Վարդանեան շեշտեց, որ նոր սերունդն է, որ պիտի ձեւաւորէ երկրին ապագան եւ պիտի կազմէ անկախ պետութեան հիմքը: Այս առումով, Հ. Յ. Դ. նախանձախնդիր է, որ այսօրուան երիտասարդը ինքզինք դրսեւորէ, որուն համար անհրաժեշտ է կրթութիւնը, որ մաս պէտք է կազմէ պետական քաղաքականութեան:

**ԻՃԵՒԻԹ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՎԻՃԱԿԸ ԿԸ ՆՄԱՆՑՆԷ Ա. ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ՕՐԵՐՈՒՆ ՏԻՐՈՂ ԿԱՅՈՒԹԵԱՆ**

Թուրքիոյ նախկին վարչապետ Պիլիքէ Էճէօք յայտարարած է, թէ Թուրքիոյ ներկայ իրավիճակը կը նմանի Մ. Ա. Միջառաջարկութեան օրերուն տիրող կացութեան: Ըստ Էճէօքի, Թուրքիա այսօր կը գտնուի շատ կարեւոր, պատմական ժամանակաշրջանի մը մէջ: «Անգլիա եւ Միացեալ Նահանգներ կ'օգտագործեն «քրտական խաղաքարտը»: Կը հաւատամ, որ հայկական գործօնը եւ պիտի շահարկուի», յայտնած է Էճէօքը: Ինչ կը վերաբերի Իրաքին, Թուրքիոյ նախկին վարչապետը յայտնած է, թէ ինչպէս Մ. Ա. Միջառաջարկութեան նպատակաշրջանին, նոյնպէս այսօր Իրաքի տարածքը գրաւուած է, ինչ որ դժուարություններու սկիզբն է եւ ոչ վերջը:

**ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ ԼԱԻԱՏԵՍ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ**

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երկ մասնակցեցաւ Հայաստանի կառավարութեան նոր կեդրոնի բացման հանդիսութեան, որմէ ետք կայացած մամլոյ ասուլիսին ընթացքին ըսաւ, թէ հաւանական է, որ Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններէն ետք կայմը ի համաձայնական կառավարութիւն մը: «Կրնայ ըլլալ, որ քաղաքական ուժ մը ունենայ մեծ ներկայութիւն խորհրդարանին մէջ, բայց ատիկա բաւարար չըլլայ կառավարութիւն ձեւաւորելու համար: Այս պարագային աւելի հաւանական կը նկատուի համապատասխան կառավարութեան մը կազմութիւնը եւ վարչապետի պաշտօնի հարցը կը վճռուի խորհրդարանի մեծագոյն խմբակցութեան համաձայն», նշեց նախագահ Քոչարեան:

Անդրադառնալով Ազգային ժողովի ընտրութիւններու նախընտրական գործընթացին, Քոչարեան ըսաւ, թէ հակառակ որոշ թերություններու, «ամէն ինչ բնական ձեւով կ'ընթանայ»: «Աշխուժ համագործակցութիւն ունինք դէտերուն հետ եւ ճիգ պիտի չխնայենք, որ թէ՛ Մայիս 25ին եւ թէ՛ անկէ ետք իրավիճակը ըլլայ հանգիստ», յայտնեց նախագահ Քոչարեան:

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՎԵՐՍՏԻՆ ՆԵՐՈՒԺԵՑ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ԳԻՒՂՆԵՐ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐ

Իսրայէլեան ուժերը երկ վերստին ներխուժեցին Կապալի եւ Այսրյորդանանի մէջ պաղեստինեան գիւղերու քաղաքներ, ուր ինկան Կոհեր ու վիրաւորներ:

Այսրյորդանանի Բեթլեհէմ քաղաքին մօտ, իսրայէլեան ուժեր վիրաւորեցին 13ամեայ պատանի մը, ինչպէս նաեւ՝ ոմբահարեցին սպանուած ծայրայեղականներու պատկանող երկու բնակարաններ, յայտնեցին պաղեստինեան աղբիւրներ: Պատանին մաս կը կապուի Կիստուններուն դէմ քարեր արձակող խումբ մը պատանիներու:

Բանակին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կը նշէր, որ Այսրյորդանանի մէջ ձերբակալուեցան նաեւ եօթը ծայրայեղականներ եւ թէ Նապոլեոն մէջ գտնուեցաւ վէսքի պահեստ մը:

Իսրայէլեան բանակը նաեւ Կապա վերադարձաւ: Բանակը, որ հնգօրեայ գրաւումէ մը ետք, Երեքշաբթի օր հեռացած էր Պէյթ Հանունէն, երկ առաւօտեան վերադարձաւ:



եան վերադարձաւ: Սօտաւորապէս քսան հրասայլեր եւ Կապա պատ փոխադրակառքեր, ինչպէս նաեւ երեք պուլտոպրներ Պէյթ Հանուն ներխուժեցին: Պուլտոպրները սկսան փձացնել մշակուած հողաշերտեր: Իսրայէլեան ուժերուն ներկայութիւնը պատճառ դարձաւ, որ վարչապետ Մահմուտ Ապպաս շնչէ շրջան այցելութիւնը: Անոր պիտի ընկերակցէր ներքին պաշտպանութեան հար-

ցերու նախարար Մոհամէտ Տահլան:

Դիւանագիտական ճիգերու ձեռնարկով, Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշմտաշիլը է Միջին Արեւելք այցելել յառաջիկայ քանի մը շաբաթներուն ընթացքին, հաղորդեց «Նիւ Եորք Թայմս»-երէկ: Պաշտօնական աղբիւրներ չհաստատեցին լուրը: Պուշմտաշիլը օր առաջին անգամ ըլլալով հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած էր Ապպասի հետ: Պաղեստինցի վարչապետը Պուշմտաշիլը անգամ էր ձեռնարկուած իսրայէլի վրայ, որպէսզի ընդունի խաղաղութեան ձայնը: Անոր քարտէսը: Պուշմտաշիլը ըսած էր, թէ ինչորոշ առարկայ բոլոր կողմերէն կը

պահանջուի առնել այնպիսի քայլեր, որոնք կը ստեղծեն խաղաղութեան ու ապահովութեան յարմար մթնոլորտ Միջին Արեւելքի մէջ:

Միւս կողմէ, Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ երկ վերստին պահանջեց, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասեր Արաֆատ արտաքսուի պաղեստինէն շրջաններէն: Շալոմ դիտել տուաւ, որ Արաֆատի գծով իր կեցուածքը անփոփոխ կը մնայ, յատկապէս երբ ի յայտ կու գայ, թէ ան կ'ուզէ ակնահարել Ապպասի իշխանութիւնը եւ արգիլել, որ պաղեստինցի վարչապետը վերջ տայ ահաբեկչական արարքներուն:

(ԱՅՓ)

**ԿԱՐԵՒՈՐ Է ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆՑ ՏԱՐԻՔՆ ՈՒ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ) ԷՁ 2**





(ԱՆ)ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ

Բազմիցս ըսած ենք: Կրկնութեան գնով եւ բաց նակատով կ'ըսենք, թէ թերեւս Հայաստանի սահմանադրական փոփոխութիւններու նախագիծին, որ ի շարս այլ բարեփոխումներու, կ'առաջադրէ վերցնել երկրադաբացիութեան դէմ դրուած արգելքը:

Արգելքի վերացումը չի նշանակեր, թէ սփիւռքահայերը առտու մը պիտի արթննան... Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի դարձած: Քաւ լիցի. այդ մէկը օրէնսգիտական անգրագիտութիւն է: Երկրադաբացիութեան հարցը կրնայ լուծման ընթացքի մէջ մտնել ԱժԻ կողմէ մշակուելիք օրէնքով: Սակայն որպէսզի այդ օրէնքը մշակուի, նախ պէտք է երկրադաբացիութեան դէմ դրուած արգելքը վերցուի ներկայիս գործող սահմանադրութենէն:

Այսքանը պէտք է պարզ ու յստակ ըլլայ բոլորիս համար:

Անյստակը սակայն այն է, որ քաղաքական գործիչներ կը շահագործեն ժողովուրդին զգացումները: Այսպէս, վերջերս հայաբնակ շրջաններու հայկական կարգ մը խանութներէ ներս նշմարեցինք «Արդարութիւն» դաշինքի ընտրական որմագրները, որոնց վրայ շատ յստակօրէն եւ մեծ տառերով արձանագրուած էր դաշինքի դեկալար Ստեփան Դեմիրճեանի խօսքը՝ սփիւռքահայութեան հետ կապերը ամրապնդելու նպատակով «վերացնել երկրադաբացիութեան արգելքը»:

Նոյն Ստեփան Դեմիրճեանը սակայն, վերջին օրերուն Սիւնիքի մէջ իր ընտրական շրջագայութեան ընթացքին, ընտրողներուն կողմէ կ'ուղղէ «ոչ» քուէարկել սահմանադրութեան փոփոխութիւններուն (տեսնել «Նոյեան Տպակ»-ի լրբեր, էջ 4):

Հիմա, Փիրանտելլոյի մամ, մեր իրաւունքն է հարց ուղղել՝ «Ո՞րն է ճշմարիտը»: Մեր կարծիքով, «Արդարութիւն» դաշինքը անարդարօրէն կը մոլորեցնէ ժողովուրդը, յատկապէս Ամերիկայի պարզ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, երբ մէկ կողմէ կը փորձէ զանոնք համոզել, թէ ինք համամիտ է Սփիւռքի հետ կապերու ամրապնդումին եւ այդ ծիրին մէջ ալ՝ համաձայն է երկրադաբացիութեան արգելքի վերացումին, իսկ միւս կողմէ, Սիւնիքի մէջ, ժողովուրդին կողմէ կ'ուղղէ «ոչ» քուէարկելու սահմանադրական փոփոխութիւններուն:

«Արդարութիւն» դաշինքը անարդարօրէն կը գործէ մեր ժողովուրդին նկատմամբ: Իսկ մեր ժողովուրդը այս հակասութիւնը տեսնելու տարրական իմաստութիւնը ունի:

Այս մասին դեռ ունինք բան լիք:

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Մարի Գազանճեանի մահուան առիթով՝ փոխան ծաղկեպսակի ԼՕՄԻ «Գայիանէ» մասնաճիւղին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները..

Տէր եւ տիկին Վարուժ Գազանճեան եւ զաւակուհի 50 \$, տէր եւ տիկին ժիրո Գազանճեան եւ զաւակուհի 50 \$, տէր եւ տիկին Զորայր Գազանճեան եւ զաւակուհի 50 \$, տէր եւ տիկին Փիեռ Ճուլֆայեան 15,000 լ.ն., տիկին Մակի Փոլատեան 10,000 լ.ն., տէր եւ տիկին Անաբեյ Գարանճեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Կարպիս Գազանճեան 50 \$, տէր եւ տիկին ժամօ Գազանճեան 50 \$, տէր եւ տիկին Աւօ Տանայեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Ճորճ Թոփալագեան 500 լ.ն., տէր եւ տիկին Անդրանիկ Գարանճեան 500 լ.ն., տէր եւ տիկին Մարտիրոս Թաթոյեան 500 լ.ն., տէր եւ տիկին Կարպիս Թոփալագեան 500 լ.ն., տէր եւ տիկին Խորեան 30,000 լ.ն., օրդ. Թագուհի Խորեան 10,000 լ.ն., Հանճեան ընտանիք 10 \$, տէր եւ տիկին Կարոյիվան Շաքարեան 30,000 լ.ն., տէր եւ տիկին Սարգիս Մինասեան 10 \$, տէր եւ տիկին Յակոբ Ազնաւորեան 20,000 լ.ն., տղք. Ժաք Պոյաճեան 15,000 լ.ն., տէր եւ տիկին Սեւան եւ Այտա Գոլուգեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Ժոզէ Կրոյեան 10,000 լ.ն., տէր եւ տիկին Ներսէս Գուգուեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Գրիգոր Օհանեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Յարութ Էզանճեան 20\$, տէր եւ տիկին Գեորգ Գնտոյեան 20,000 լ.ն., տիկին Արփի Զաքարեան եւ զաւակուհի 20,000 լ.ն., տէր եւ տիկին Նազարէթ Կոստանեան 20 \$, տէր եւ տիկին Կարպիս Կարապետեան 15,000 լ.ն.:

●Բիզանդ Գուգուեանի մահուան առիթով՝ փոխան ծաղկեպսակի ԼՕՄԻ «Գայիանէ» մասնաճիւղին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Պրն. Գեորգ Թաթոյեան 500 լ.ն., տէր եւ տիկին Երուանդ Կեցոյեան 500 լ.ն., պրն. Սարգիս Գուգուեան 500 լ.ն., տէր եւ տիկին Ճորճ Պարտումեան 500 լ.ն., տէր եւ տիկին Կարպիս Գուգուեան եւ զաւակուհի 500 լ.ն., տէր եւ տիկին Նազարէթ Տէր Խորեան 300 լ.ն., տէր եւ տիկին Յակոբ Գուգուեան 20 \$, տէր եւ տիկին Թորոս Աշեան 10,000 լ.ն., տէր եւ տիկին Կարօ Մելքոնեան 500 լ.ն., տիկին Անժել Գուգուեան 10 \$, տէր եւ տիկին Ներսէս Պալեան 10 \$, տէր եւ տիկին Պետրոս Ծէմմեան 10 \$:

●Մաքրուհի Մարկոսեանի մահուան առիթով, Ս. Գեան Մայր եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները .-

Վարուժ Թորիկեան 20,000 լ.ն., Յարութիւն Իլանճեան 20,000 լ.ն., տիկին Յովիկ Զեօւէեան 10,000 լ.ն., Գրիգոր Յովհաննէսեան 20,000 լ.ն., Սարգիս Յովհաննէսեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Ասատուր Տոպումեան 20,000 լ.ն., Ուսկիտ Պուրայի 20,000 լ.ն., Փաթրիք Սմիթ 30,000 լ.ն., Եփրեմ Կոստանեան 20\$, Վրէժուհի Յովհաննէսեան 20,000 լ.ն. եւ տէր եւ տիկին Զրիստափոր Յովհաննէսեան 10,000 լ.ն.:

ՆՇԱՐ

ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ՄԱՆԷՕՎՐՆԵՐ

Ո՞վ կը կառավարէ Թուրքիան: Իսկապէս ո՞վ կը կառավարէ այս երկիրը, որ երբեմն հասկնալի, բայց ընդհանրապէս անհասկնալի քաղաքականութիւն կը կիրարկէ:

Հասկնալի-անհասկնալի քաղաքականութեան ծիրէն ներս, թրքական սաւառնակներ վերջին օրերուն յաջորդական խախտումներ կատարեցին Եգէական ծովու վերեւ՝ յունական օդամարզի մէջ: Երբ այս խախտումներու մասին Յունաստանի արտաքին գործոց նախարար Եորդո Փափանտէզը՝ Օթօ Անի արտաքին գործոց նախարարներու հաւաքին, Պրիւքսէլի մէջ, անուղղակիօրէն հաշիւ պահանջեց երկրութեան մասին, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապուլա Կիւլօ տար մտորակէ նոր ժամանած էակի պէս, կոյր ու խուլ ձեւացաւ:

- Ինչե՞ր կ'ըսէք, ընաւ լուր չունիմ եղածներէն... Պրն. Փափանտէզը զգուշացուց, թէ չի կրնար ըմբռնել որ եւրոպական Միութեան թեկնածու երկիր մը, եւրոպական Միութեան լիիրաւ անդամի մը դէմ ռազմական յարձակողականութեան կեցուածք որդեգրէ:

Հասկնալի է որ «չեմ գիտեր-չեմ պատասխաներ» թրքական քաղաքականութեան այս երեւոյթը նոր չէ, ընդհակառակը արուեստական է, միտումնաւոր կերպով մտածուած ու զրսելորուած:

Անշուշտ որ Թուրքիոյ քաղաքական իշխանութիւնը ամբողջական հակակշիռ չունի բանակի զօրավարներուն վրայ, սակայն բանակի զօրավարներն ալ Թուրքիոյ եւրոպական ընթացք իրենց չափերով կ'ուզեն տեսնել եւ Յունաստան-Թուրքիա յարաբերութիւնները, կամ կիրարկան հարցը կ'ակնկալեն լուծել իրենց չափած պահանջներով:

Մէկ խօսքով, պառակտիչ քաղաքականութիւն մը, որուն լեզուն անձանթ է եւրոպայի: Այդ մէկը կը խօսուէր Բարեխոնի աշտարակի օրերուն: Թուրքիա Բարեխոնականի վերածուած է:

«ԱԶՍ ՕՐ»

ԸՆԹԵՐՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՄ

Գուն ալ մայր ես, ու տօն ունիս ուրիշին պէս, սակայն հայ ես, Այդ կոչումով՝ կը տածենք քեզ անհուն սէր ու յարգանք: Հայ անունով ոչ թէ տածանք, այլ պարծանք տալ քեզ կը ցանկանք. Թէեւ հնո՛ւց անբախտ եղար, վիշտ ու մորմոք շատ ունեցար:

Գորովայից մայր անսպակ, եղար ճրագ, անբասիր ակ, Եղար հերոս՝ Սօսէ Մայրիկ, պէնքը ձեռքին անվախ մարտիկ, Պատուախնդիր Շաքէն անձար, նետուն՝ գետը խօլ ու վարար, Սակայն, մոռնանք անցած խորտը էջերը վատ, չըլլանք վիատ:

Ներկայ դարուն՝ նոր սապարէզ, մարտակոչեր կը սպասեն քեզ, Բարոյական ու կրթական պայքարներ կան դէմ յանդիման, Մարդկութիւնը ապականող, թոյն արձակող մտքեր դաժան, Աջէն - ձախէն սերունդները թիրախ կ'ըլլան, կը փձանան:

Քաղաքակիրթ կոչումս մարդեր, կը տարածեն նորոյք բարքեր, Կ'ուզեն քանդել եկեղեցին, ընտանիքն ու ազգութիւններ, Կրնա՞ս տեսնել, վտանգներուն պատուար դնել եւ արգիլել, Ահապանգ է, հո՛ս է հիմա հերոսութիւնս ու փրկութիւնս:

Ապատութեան վեհ անունով՝ մայրութիւնը կ'ոտնակոխեն, Վարդ երապներ, նիւթեր գանձեր, շիջնող հապար դոնէր ձամբայ բանան այդ թակարդին՝ նշանաբան ապատ կեանքին, Հաւասարիլ տղամարդին, բայց գիտե՞ս, թէ հ՞ո՞ւ է իր գինը:


Քնքուշ հայ մայր, հաւասար ես տղամարդուն գերապանց ես՝ Երբ պաւակներ ու թոռնիկներ դուն կը կրթես, կը մեծցնես, Սուրբ առաքեալ՝ եթէ ուզես, ազգ կը կերտես կամ կը քանդես, Այս գործին մէջ ոչ թէ այրին հաւասար ես՝ այլ գերմարդ ես:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՆԱՆԵԱՆ

www.hamazkayin.com


ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ԳՐԱԽԱԿԱՆ

Վերջերս, Արտասահմանեան երկրների հետ Մշակութային Կապերի Միութեան դահլիճում (ԱՕԿՄ) տեղի ունեցաւ Հայաստանում Ֆրանսայի դեսպան Հանրի Քիւնիի «Երջանկութիւն ամէն տեսակի» էսսէների ժողովածուի գինեծօնը:



ԱՕԿՄի դահլիճը լիցեցուն էր Երեւանեան մտաւորականներով եւ արուեստագէտներով, Երեւանի Պետական Համալսարանի ուսանողներով եւ արուեստագիտական համալսարանի բաժնի, Բրիւսովի Լեզուագիտական համալսարանի եւ Երեւանի Ֆրանսական համալսարանի դասախօսներով եւ ուսանողներով: Ներկայ էին նաեւ «Հայաստան - Ֆրանսա» ընկերութեան վարչութեան անդամները:

Երեւոյթը բացեց «Հայաստան - Ֆրանսա» ընկերութեան նախագահ Մոսկովիտա Չալոյեան-Յակոբեանը, որն իր բովանդակային խօսքի մէջ ներկայացրեց դեսպանի՝ մինչեւ Հայաստանում Ֆրանսայի դեսպան նշանակուելու դիւանագիտական կենսագրութեան հիմնական հանգրուանները. Թուրքիա, Իտալիա եւ այլն: Տիկին Չալոյեանը նշեց, որ Հանրի Քիւնիի դիւանագիտական բեղմնաւոր գործունէութիւնը զատ յայտնի է նաեւ իբրեւ «Հանրի Շէնըվիէր» (ըստ իր ծննդավայրի անունի) կեղծանունով տակ հանգէս եկող գրող: Իր երկերի համար նա արժանացել է Ֆրանսական հեղինակաւոր գրական մրցանակների քաջ գիտակ եւ հովանաւոր, որի կենդանութեան օրի կենսագրութեան օրի տեղի երաժշտութիւնը: Պատահական չէ, որ ճանաչուած թարգմանիչ Ալիքսանտր Թոփաճեանի թարգմանութեան Հայաստանում Ֆրանսայի դեսպանի պաշտօնին, անհատ, որն աչքի է ընկնում իր խորը Հայաստանութեամբ հոգու բազում թելերով ջերմօրէն կապուած է Հայաստանին եւ նրա մշակոյթին»:



Ասոր ժեստիւնը երջանկութիւն ամէն տեսակի

խուժ ասուլիս, որի ընթացքին դեսպանը հարցերին պատասխանում էր հանգամանալից եւ բացայայտ անկեղծ կերպով: Ասուլիսին մասնակցում էին Հայաստանեան միշտ առաջատար օրաթերթի յայտնի լրագրողներ, հեռուստաընկերութիւնների հաղորդավարներ, մտաւորականութեան ներկայացուցիչներ: Ասուլիսին յաջորդեց զեղարուեստական յայտագիրը, որի ընթացքում ելոյթ ունեցաւ Ֆրանսահայ յորինող Էօֆենի Ալէսեանի «Ամազուհի» սենեկային օփերայի վերջերս Հայ - Ֆրանսական համատեղ բեմադրութեան մէջ զլիաւոր դերերով փայլուն կատարուած շանդէս եկած երիտասարդ Նորհայր Երզնուհի՝ ստիփանօ Սուսաննա Բագամեանը: Նա յաջողութեամբ մեկնաբանեց Պիլի, Էտ. Աբրահամեանի, Երուսէթի եւ Տէպիւսէի ստեղծագործութիւնները, որոնք ջերմ ընդունելութեան արժանացան:

Համակրելի, ճշմարիտ մտաւորականին յատուկ համեստութեամբ օժտուած անհատականութիւն է Հանրի Քիւնիին, որն իրապէս գերեց լսարանը: Ինչպէս արդարացիօրէն նկատեց Մոսկովիտա Չալոյեան իր խօսքի մէջ՝ «Հայերիս համար ուղղակի ճակատագրի պարզ եւ նման անհատին վաշխելը Հայաստանում Ֆրանսայի դեսպանի պաշտօնին, անհատ, որն աչքի է ընկնում իր խորը Հայաստանութեամբ հոգու բազում թելերով ջերմօրէն կապուած է Հայաստանին եւ նրա մշակոյթին»:

Տեղի ունեցաւ նաեւ աշխարհային երջանկութեան տարբեր երեսակների մասին խորհրդածութիւնների հաւաքածո:

Գիրքը լոյս է տեսել «Ապոլոն» հրատարակչութիւնում, 2003 թուին, 2000 օրինակ տպաքանակով, վահան Տէրեանի անուան «Օգնութիւն հրատարակչական գործին» ծրագրի շրջանակներում, Ֆրանսիայում:

Տեղի ունեցաւ նաեւ աշխարհային երջանկութեան տարբեր երեսակների մասին խորհրդածութիւնների հաւաքածո:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր աւոճը, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնել հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՐ 5:00: ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԶՄՍԱՌՈՒ ՏԻՐԱՄՕՐ ՎԱՆԵ ԶՄՍԱՌՈՒ ՈՒՄՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ՕՐ

Ժողովուրդին ուխտը... Իր Սօրը, Մայիս ամսուան վերջին Կիրակիին  
**ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԲԱՐԵՍՕՍԷ՝**  
Կիրակի 25 Մայիս 2003  
Թափօր Չմմառու Վանքին մուտքէն ժամը 10.00-ին  
Յայրապետական սուրբ Պատարագ ժամը 10.30-ին  
ԿԼՍՈՒՄ ԵՍՐ  
5.00ին վարդարանի աղօթք - 5.30ին սուրբ Պատարագ  
6.30ին վարդարանի աղօթք - 7.00ին սուրբ Պատարագ







# Կարգապահ

## Փորձ - Շարժում

### ԿԸ ԿԱՐԾԵ՞Ք, ՈՐ ՀԱՍՈՒՆ ԱՆՉ ԷՔ

**1**

Եթե պատահի, որ տան մէջ ձեր ձեռքէն բան մը իյնայ ու կոտորի, ի՞նչ կ'ըլլայ ձեր հակազդեցութիւնը:

ա.- Դուրս ձեռք կը մեղադրէք:

բ.- Ձեր ուսերը վեր կ'ընէք անտարբերութեամբ:

գ.- Ձեր զայրոյթը «կը պարպէք» այլ իրի մը կամ անձի մը վրայ:

**2**

Եթե տան մէջ գործիք մը խանգարուած է եւ չէք կրնար նորոգել՝

ա.- Ուրիշին օգնութեան կը դիմէք:

բ.- Բարկացած գործիքը մէկ կողմ կը չարտէք:

գ.- Գործիքը մէկ կողմ կը ձգէք՝ կրկին փորձելու միտումով:

**3**

Ինչպիսի՞ անձերէ չէք ատրոժիր՝

ա.- Ձեզի յաղթողէն:

բ.- Ձեզ խաբողէն:

գ.- Գործի մէջ ձեզ ծուրակը ձգողէն:

**4**

Եթե անձ մը ձեզի հետ սխալեցաւ, ի՞նչ կ'ըլլայ ձեր հակազդեցութիւնը:

ա.- Կը ներէք:

բ.- Կը մոռնաք:

գ.- Կը ծրագրէք վրէժ լուծել:

**5**

Գործի մէջ ի՞նչ բան կը զայրացնէ ձեզի:

ա.- Հրահանգներ ստանալը:

բ.- Շահագործուելը:

գ.- Զրպարտուելը:

**6**

Եթե պատկերասփիւռի լուրերուն կ'ուզէք հետեւիլ եւ տեսնել իր իրերը՝

ա.- Կը խնդրէք, որ լռեն:

բ.- Կը մարէք պատկերասփիւռը:

գ.- Պատկերասփիւռին ձայնը կը բարձրացնէք:

**7**

Բախտախաղի ժամանակ կը պատահի՞ որ ջղայնանաք եւ վիճիք:

ա.- Երբեմն:

բ.- Ընդհանրապէս:

գ.- Հազուադէպօրէն:

**8**

Չափահաս անձի մը մօտ ի՞նչ բան կը նեղացնէ ձեզ:

ա.- Տգիտութիւնը:

բ.- Տեսութիւնը:

գ.- Մակերեսային ըլլալը:

**9**

Ինքնաշարժ վարելու ատեն ի՞նչ բան կը զայրացնէ ձեզ:

ա.- «Տուպլէ» ընել եւ ձեզի անցնելը:

բ.- Ուրիշին կողմէ ձեզի ուղղուած կոպիտ խօսք մը:

գ.- Երթեալի օրէնքներուն անտեսումը:

**10**

Ձեր մանկութեան խաղալիքներէն քանի՞ հատը պահած էք մինչեւ օրս:

ա.- Ոչ մէկ խաղալիք պահած էք:

բ.- Մէկ կամ երկուքը պահած էք:

գ.- Բոլորը խնամքով պահած էք:

**11**

Ի՞նչ բան չէք հանդուրժեր:

ա.- ուրիշներուն բախտաւոր ըլլալը:

բ.- Օրուան ընթացքին յուսախաբութիւնները:

գ.- Ձեր տկարութիւններն ու թերութիւնները:

**12**

Երբ հաւաքոյթի մը ըն-

թացքին սխալ մը գործէք՝

ա.- Կը փորձէք դուրս ձեզ արդարացնել:

բ.- Իրար կ'անցնիք ու կը կարմրիք:

գ.- Կ'ընդունիք ձեր սխալը եւ ներողութիւն կը խնդրէք:

	ա	բ	գ
1	5	10	0
2	10	0	5
3	10	5	5
4	12	5	0
5	0	10	5
6	10	0	5
7	5	0	10
8	5	10	0
9	0	5	10
10	10	0	0
11	0	10	5
12	0	5	10

### ԱՐԳԻՒՆՔ

● Եթէ 120 կէտ հաւաքեցիք, դուք իսկապէս հասուն անձ եք եւ ձեր կեանքը կը վայելէք ու հաճոյք կ'առնէք անկէ, հեռու ժխտական գաղտնիքներէ եւ բուժող հակազդեցութիւններէ: Միակ անպատեհութիւնը այն է, որ ամէն բան շատ լուրջի կ'առնէք, հաշիւով կը խօսիք, հաշիւով կը գործէք: Եղէք աւելի պայլոք եւ ինքնաբերական:

● Եթէ 100 - 115 կէտ հաւաքեցիք, հասուն եւ գիտակից անձ եք: Ձեր հասունութիւնը ոչ մէկ ձեռքով կ'արգիլէ, որ տեղի համեմատ մանկացանք, զուարեանք: Խառնուածքով ներդրումիտ եւ համերաշխ երբեք ոխակալ չէք: Նախանձ չէք, ուրիշին լաւութիւնը կ'ուրախացնէ ձեզի:

● Եթէ 70 - 75 կէտ հաւաքեցիք, որոշ հասունութիւն մը ունիք, բայց աւելի ինչ պէտք ունիք կեանքի մէջ դժբախտ չզգալու ձեր հարցերն ու դժուարութիւնները զիմազրուելու համար:

Յարաբերեցէք փորձառու եւ հաւասարակշռուած անձերու հետ եւ դիմեցէք անոնց կարծիքին:

● Եթէ 40ի շուրջ կէտ հաւաքեցիք, ժամանակն է, որ արթնանաք եւ ձեր շուրջը նայիք... մնացած էք մանուկ եւ մակերեսային, բարկացկոտ եւ դիւրագրգիռ:

Կեանքի մ փորձառութիւնները չեն ազդած ձեր վրայ, տարբեր մոլորակի վրայ կ'ապրիք:

## ՄԵՐ ԶԱՄԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԵ

### Ի՞ՆՉՊԵՍ ՎԱՐՈՒԻՒԼ, ՈՐՊԵՍՁԻ ՀՆԱԶԱՆԴԻՆ ՄԵՉԻ

Որպէսզի երեխան հնազանդի ծնողին եւ ընդունի անոր ճշգրտ կարգապահական օրէնքները, պայման է, որ ան ինքզինք սիրուած զգայ ծնողէն: Եթէ ան զգայ, որ ծնողը կը յարգէ իր զգացումները, ճաշակը, փափաքները, աւելի դիւրին կ'ընդունի իրենց պարտադրուած օրէնքները:

Բոլոր երեխաներն ալ պէտք ունին կարգապահութեան, քանի որ անոր շնորհիւ է, որ պիտի մեծանան եւ դառնան ինքնաբաւ եւ պատասխանատու անձեր: Ոչ մէկ երեխայ առաջին իսկ օրէն կ'ընդունի եւ կը գործադրէ իրեն պարտադրուած որոշ օրէնքներ, եթէ անոնք համոզիչ չըլլան:

**ՊԱՂԱՐԻՒՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵԼ**

Մտողի մը համար ամէնէն դժուար բանը հաւանաբար ջիղերուն տէրը ըլլալ է չպտոթկայն է: Եթէ երեխան կը մերժէ հնազանդիլ եւ պտոթկայ կը բողոքէ, պատճառ մը չէ, որ ծնողը ալ աւելի պտոթայ:

Ճիշդ է, որ ընդհանրապէս ծնողն է որ վերջին խօսքը կ'ըսէ, բայց եթէ այդ խօսքը զայրոյթի պատճառով վայրկեանական պտոթկում մըն է, հարցերը տեղ քայլ կ'ընեն:

**ԵՐԵՒԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹԵՆԸ ԱՒԵԼԻՆ ՉՍՊԱՍԵԼ**

Շատ յաճախ ծնողները իրենց զաւակներէն կը սպասեն անոր կարողութեան վեր վերաբերմունք: Կարելի չէ 4-5 տարեկան պոտիկէ մը պահանջել, որ տրամաբան է, հանդարտ նստի, չաղմկէ եւ այլն... Երեխայ մը խառնուածքով աղմկարար, եսակերոն, անկարգապահ եւ ինքնաբերական կ'ըլլայ, կարելի չէ մէկ օրէն միւսը անկէ պահանջել քանի մը տեսակ բան եւ կամ ընթացքի արագ փոփոխութիւն: Տարիներ պէտք են, որպէսզի ան հասնի որոշ տրամաբանութեան մը եւ քիչ-քիչ հունի մէջ մտնէ:

**ԳՐԱԿԱՆ ԿԵՅՈՒԾՔ ՈՐԳԵԳՐԵԼ ԵՒ ՔԱՉԱԼԵՐԵԼ**

«Կը բաւէ՞ աղմկես...», «Տակաւին պատկերասփիւռն առջե՞ս ես...», «Արմուկներդ սեղանին վրայէն վա՛ր առ...», «Չըսի՞ զնա՛, լուսցուէ՛...» օրական այս խօսքերը յսոյ երեխան ի վերջոյ այն տպաւորութիւնը կ'ունենայ, որ ինք զգուցիկ անձ մըն է իր ծնողին համար: Ան քնակաւոր փոխակաւոր պատկեր մը կ'ունենայ իր անձին մասին եւ երբեք չի սրբազրուիր:

Գիտակից ծնողը, բարեփոխելու համար զաւակին ընթացքը պէտք է որ դրական աչքով դիտէ զայն: Ծնորհակալական կամ քաջալերական խօսք մը, կամ պոտիկ վարձարութիւն մը երեխան կը մղեն հաճոյակատար եւ ազնիւ ըլլալու:

Վերջին հաշուով, բոլոր երեխաներն ալ կը փափաքին ազնիւ եւ հնազանդ ըլլալ, բայց երբեմն շատ դժուար է ծնողները գոհացնել:

### ԽՈՒՍԱԳԻՐ

### ՊԱՆԻՐՈՎ ԲՈԿԵՂ



- Բաղադրութիւն՝ 8-10 անձի համար
- ◆ Մէկ կողմէս գաւաթ հալած կարագ
- ◆ Կէս գաւաթ բուսական ձէթ
- ◆ Մէկ գաւաթ մանրուած պանիր (ձեր ճաշակին)
- ◆ Հինգ գաւաթ ալիւր
- ◆ Երեք թէյի դգալ պէտքի կ'փառուրը
- ◆ Ջուր՝ շաղիւղ համար
- ◆ Կէս թէյի դգալ աղ
- ◆ Հաւակի մը դեղնուցը

Պատրաստութիւն  
Ամանի մը մէջ խառնել կարագը, ձէթը, ալիւրը, պէտքի կ'փառուրը, պանիրն ու աղը: Բիչ-բիչ աւելցնել ջուրը եւ շաղիլ, մինչեւ որ կակուղ խմոր մը ըլլայ: Չայն կէս ժամ ձգել որ հանգչի:

Կէս ժամ ետք խմորը պոտիկ գունդերու վերածել եւ խխունջի պէս փաթթել, երեսը հաւակի թափել, սեւ զնդիկ ցանել (բոտ փափաքի) եւ 250 ջերմաստիճանով փուռի մէջ եփել, մինչեւ որ բոկեղները ոսկեգոյն դառնան: Հրամայել սուրճի, թէյի կամ օշորակի հետ:

www.aztagdaily.com



### ՈՍԿԻ ՕՐԵՆՔՆԵՐ

Որպէսզի երեխայ մը հնազանդի իր ծնողին, օրէնքները պէտք է ըլլան՝

ՊԱՂՁ ԵՒ ՅՍՍԱԿ. «Ժամը 8:00ից՝ անկողին»:

ՅՍՍԱԿ ԵՒ ԿՏՐՈՒԿ. «Եթէ ինքնաշարժի գօտիները չկապենք, ճամբայ չենք ելլեր»:

ՄՆԱՅՈՒՆ ԵՒ ՀԵՏԵԻՈՂԱԿԱՆ. Այսպէս, երկուշաբթի օրուան օրէնքը ի օրու է շաբթուան բոլոր օրերուն: Որոշ տարիքէ մը առաջ երեխան չի գիտեր բացառութիւն բառին իմաստը:

Քիչ թիւով. Կարողութեան վեր բաներ չպահանջել. թող բանի մը օրէնք յարգէ եւ գործադրէ, արդէն մեծ բան է:

ԻՄԱՍՍԱԿԻՑ. Երեխան պէտք է ըմբռնէ եւ համոզուի, որ տուեալ օրէնք մը իր բարիքի համար է եւ ոչ միայն ծնողին հանգիստի համար:

### ՃԻՇՂ, ԹԵ ՍԽԱԼ

### ՄՏՈՒԳԵՆՔ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

**1**

Հաւազոյն բնասպիտները (փորթէին) կը գտնուին հաւակի մէջ:

ՃԻՇՂ, գայն կը գտնենք հաւակի մէջ ճերմակ գոյնի մէջ, որ նաեւ հարուստ է «Պէ 1», «Պէ 2» կենսաակտիւ բերաններով:

**2**

Միւս աւելի իւրոտ է, քան՝ ձուկը:

ՃԻՇՂ, մանաւանդ որ միսին պարունակած իւրը կը վնասէ քոլեքտիկոլից եւ կը նպաստէ անոր բարձրացումին, մինչդեռ ձուկին պարունակած իւրը կը նպաստէ անոր նուազումին:

**3**

Կիրը կը գտնենք կաթնեղէններուն մէջ միայն:

ՍԽԱԼ, մեր ոսկորներուն զօրացման համար այնքան անհրաժեշտ կիրը կը գտնենք նաեւ հանքային ջուրերուն, ազատքեղին, շոմինին, հատեղէններուն եւ նուրին մէջ:

**4**

Ճերմակ շաքարը անհրաժեշտ է մեր մարմնին:

ՍԽԱԼ, մեր մարմինը իրեն անհրաժեշտ շաքարը կը ստանայ մեր կերած պտուղներէն, բանջարեղէններէն եւ ընդհանրապէս: Հետեւաբար, ճերմակ շաքարը կարելի է համարել ճերմակ թոյն...

**5**

Թելադրելի է ուտելիքները շոգիով եփել:

ՃԻՇՂ, տրուած ըլլալով, որ խաշի եւ երկար եփի ժամանակ բանջարեղէնները կը կորսնցնեն իրենց պարունակած կենսաակտիւ բերանները եւ «հանքային» ուժերուն մէկ կարեւոր տոկոսը: Միւս կողմէ, ճարպաթթուներու մէկ կարեւոր մասը չի դիմանար բարձր ջերմաստիճանի եւ երկարատեւ եփի:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԿԱԼԵԱՆ

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԿԻՐՈՒԹԵԱՆ**

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթացիկ գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

**Մայրերու Տօնին Առիթով**

**ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ**

հայրենի երգիչ եւ ջութակահար՝

**ՏԻՊՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**

Ընկերակցութեամբ՝ Սազօ Պետրոսեանի եւ իր նուագախումբին

Մասնակցութեամբ՝ հանրաժամօք երգիչ - երգչուհիներու եւ դերասաններու նաեւ՝ հաճելի անակնկալներ

Շոքու եւ խանդավառ մթնոլորտի մէջ, հայկական, ռուսական, քնչույական, արաբական եւ յունական յայտագիր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս 2003-ին, երեկոյեան ժամը 9:00-էն սկսեալ ճաշարան Al Amin-ի, մէջ Լուէլյո-ժամհուր, մայրուղիի վրայ:

● Տոմսերը ստանալու համար դիմել GEKA Records ֆոն: 03/242685 եւ յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ հետեւեալ թիւերուն 03/741230 - 03/666060 - 03/667687





